



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 8	
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ 15	
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 25	
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ..... 32	
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ 40	
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 47	
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 54	
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ 63	
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ..... 69	
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 76	
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 88	
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 97	
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ և ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Ջ. ՋՈՅՍԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ

Արեգա Համբարձումյան
Երևանի պետական համալսարան

Մեղքի գաղափարը ներդրվում է մտքի և հոգու մեջ մարդկային կյանքի դեռևս ամենավաղ շրջանում, երբ դեռևս հաստատուն չեն շրջակա աշխարհի մասին պատկերացումները, և երբ լավի ու վատի տարբերակումը անհայտ է մարդկային գիտակցությանը: Ջեյմս Ջոյսի՝ «Երիտասարդ արվեստագետի դիմանկարը» (“A Portrait of an Artist”) վեպը իր տեղն ու դերը փնտրող անձի ինքնահաստատման քարտեզ է: Կենտրոնական հերոս Սթիվեն Դեդալուսը հասուն կյանք մտնելուն պես բախվում է սեփական մեղսականության անբեկանելի ճշմարտությանը, որը դառնում է միաժամանակ արգելք և խթան զարգացման համար: Երևույթները ընկալելով արվեստագետի աչքերով՝ երիտասարդը դրանք սկսում է գնահատել ոչ թե մեղքի և անմեղության, այլ լոկ գեղեցկության չափանիշով:

Բանալի բառեր. *մեղավոր գիտակցություն, անհատի ինքնորոշում, բնագոյներ, սխալականություն, լավ-վատ, արվեստագիտական արարչագործություն:*

Ներածություն

Մեղքի գաղափարը կարմիր թելի պես անցնում է իռլանդացի արձակագիր Ջեյմս Ջոյսի ստեղծագործության միջով՝ որպես անձնային որակների ձևավորման և անհատի կայացման շղթայի կենտրոնական օղակներից մեկը: Մեղքի գաղափարը ներդրվում է մտքի և հոգու մեջ մարդկային կյանքի դեռևս ամենավաղ շրջանում, երբ դեռևս հաստատուն չեն շրջակա աշխարհի մասին պատկերացումները, և երբ լավի ու վատի տարբերակումը անհայտ է մարդկային գիտակցությանը: Ֆրանքի պնդմամբ՝ թեև մարդը իր ծննդյան պահին հանդիսանում է «մաքուր տախտակ»՝ *tabula rasa*, միննույն է նա արդեն կրում է համընդհանուր գիտակցության հիմնարար տարրերը՝ անգամ սեփական ինքնագիտակցության բացակայության պայմաններում (Franke 2008:639): Ուստի կարծում ենք, որ անհնար է հաշվի չառնել ազգային-հասարակական ընդհանրական կյանքի թելադրած կանոնների դերակատարումը յուրաքանչյուր անձի կյանքում: Պարադոքսալ կերպով հենց դրանք են մեղքի սկզբնաղբյուրը, քանի որ միայն հստակ կանոնների առկայության դեպքում է, որ առաջ է գալիս անմեղի-մեղավորի դասակարգումը:

Հետաքրքիր է, թե ինչպես է Ջոյսի՝ «Երիտասարդ արվեստագետի դիմանկարը» (“A Portrait of an Artist”) վեպը ներկայացնում իր տեղն ու դերը փնտրող անձի ինքնահաստատման քարտեզը: Կենտրոնական հերոս Սթիվեն Դեդալուսը հասուն կյանք մտնելուն պես բախվում է սեփական մեղսականության անբեկանելի ճշմարտությանը, որը դառնում է միաժամանակ արգելք և խթան զարգացման

համար: Պատանին անհագ ցանկությանը տենչում է համապատասխանել բարոյական մարդու չափանիշներին, բայց և այնպես բացահայտում է, որ ներքին բնագոյային մղումները անհամեմատ առավել գորեղ են:

Պատանեկան գիտակցության բախումը մեղքի գաղափարին

Մթիվները փորձում է պարզաբանել պատանեկան փնտրտուքների արդյունքում գոյացած բազմաթիվ անպատասխան հարցերը իր ընտանիքի անդամների, ընկերների, այլոց հետ ունեցած շփման միջոցով: Թեև բարոյական նորմերը պատմականորեն սահմանված են հասարակության կողմից, բարոյականությունը մնում է չափազանց հեղիեղուկ երևույթ, որի կանոնները հեռու են միանշանակ լինելուց և առավել հաճախ անելանելի երկրնորանքի առջև են կանգնեցնում մարդուն: Երբեմն բարոյական որևէ նորմ լիովին այլ մեկնաբանություն կարող է ստանալ մեկ այլ տեսանկյունից: Այսպես, օրինակ, մանկահասակ Մթիվները, ով սովոր էր համբուրել մորը քնելուց առաջ, հանկարծ բացահայտում է, որ դա ամենևին «ճիշտ» չէ: Ամենը մանկան սիրո դրսևորումը մոր հանդեպ ձեռք է բերում այլ ենթատեքստ ու մեխանիկորեն համարվում «սխալ» լոկ այն պատճառով, որ երևույթը դիտարկվում է մեղքի դասակարգում, որտեղ ամեն բան ձեռք է բերում մեղսական երանգավորում: Նման ձևով դեռևս մանկական գիտակցությունը սկսում է բացահայտել մեղքի գոյությունը առհասարակ, վերլուծել սեփական մտքերն ու ներաշխարհը, փնտրել ճիշտը և սխալը՝ ընդհանրացված և ընդունված հանրորեն: Երբ հաշվի չեն առնվում անհատական առանձնահատկությունները և գործում են ընդհանուր պատկերացումներ, խեղաթյուրվում են անգամ ամենամեղ երևույթները: Մեղքից խուսափելու համար սահմանված կանոնները և նորմերը չափազանց խրթին ու հակասական են երիտասարդ Մթիվների գիտակցության համար: Չկարողանալով տրամաբանական եզրահանգումների գալ անպատասխան հարցերում՝ նոր ձևավորվող անհատի միտքը ստանում է աղավաղված պատկերներ և յուրովի մեկնաբանում երևույթները՝ տարբերայնորեն դասակարգելով դրանք որպես «ճիշտ» և «սխալ»:

«Եթե մեկը երիտասարդ ժամանակ մի ֆունտ է գողացել և օգտագործել այն ահռելի կարողության տիրանալու համար, ապա որքան էր նա պարտավորվում ետ վերադարձնել՝ այն ֆունտը, որը գողացել էր, թե՛ իր ողջ ունեցվածքը... Արդյո՞ք մկրտությունը վավերական է, եթե այն կատարվի սովորական ջրով, կամ եթե քահանան ջուրը լցնի մինչև բառերն արտասանելը» (Joyce 2005:31):

Գաղտիք չէ, որ հենց պատանեկան հասունացման շրջանում է, որ կատարվում են անհատականության հաստատումը և ինքնորոշումը. մարդը, ով արդեն երեխա չէ, բայց և դեռ հասուն անձ էլ չէ, սկսում է ինքնաձանաչման փշոտ ուղին, երբ բացահայտում է ինքն իր մեջ այն ողջ դրականը և բացասականը, որը մինչ այդ անհայտ էր իրեն: Այդ ճանապարհին երևան են գալիս ենթագիտակցության ամենախորը և մթին անկյունները՝ լի առեղծվածային մղումներով և անբացատրելի ցանկություններով: Երիտասարդի ներաշխարհում ծագած գաղտնի մղումները ամբողջովին կապակցվում են մեղքի հետ, և այդ կերպ անձի ինքնագիտակցության մեջ ծնունդ է առնում մեղքի գաղափարը: Համաձայն Բրանդտի՝ մեղքը խարսխվում է ճանաչողությանը, այն է՝ «անհնար է բացահայտել նորը և անհայ-

տը առանց սխալի և մեղսագործության» (Brandt 1979: 108): Մթիվենի «մեղքը սիրող հոգին» ուղղորդում է նրան դեպի քաղաքի պիղծ արվարձանները, որտեղ նա ճանաչում է մեծահասակների աշխարհը և ինքն իրեն: Հասունության փորձի ձեռքբերման ճանապարհը անցնում է մեղքի միջով, և եթե ցանկանում ես սխալներ չգործել, ապա անհրաժեշտ է լինել անգործունակ: Նշանակում է՝ մեղք գործելը նույնն է, ինչ փորձելը, վերլուծելը, ձգտելը, հետաքրքրվելը, մի խոսքով՝ մտածելը: Եվ ուրեմն միտքը մեղքի ծնողն է, սակայն չէ՞ որ եթե «մտածում եմ, նշանակում է՝ կամ»: Անմեղ մնալու համար պետք է հրաժարվել մտածողությունից՝ այն բացառիկ կարողությունից, որը շնորհիվ է մարդ արարածին Աստծո կողմից:

Այսպիսով, հանգում ենք այն եզրակացության, որ մեղքը հանդիսանում է երկակի մեծություն: Նախ՝ այն մարդկային էության ստորին բնագոյների հագուրդ տալն է և, միևնույն ժամանակ, մեր բարձրագույն սկզբից երես դարձնելն է: Տրվելով բնագոյային ցանկություններին և մղումներին՝ մարդը հանգցնում է աստվածային լույսը իր մեջ: Նա իր մեջ համադրում է կենդանական և աստվածային սկիզբը՝ ներկայացնելով այդ երկուսի կատարյալ խառնուրդը: Բարձրագույն երջանկությունը այդ հակասությունների ճիշտ հավասարակշռությունն է, երբ բնագոյն և գիտակցությունը գտնվում են լիակատար ներդաշնակության մեջ: Բնագոյները ներդրված են մարդկային բնության մեջ և գործում են նրա կամքից անկախ: Աչքերը տեսնում են նախապես չցանկանալով տեսնել այս կամ այն օբյեկտը, և մի ակնթարթում պատահում է մեղսավորությունը: Մարդկային հոգին մեղանչում է մարմնի պատճառով և դրա միջոցով՝ արտահայտություն գտնելով մտքի, խոսքի ու արարքի մեջ: Տեսողությունը, լսողությունը, շոշափելիքը, հոտառությունը և համի զգացումը միշտ չէ, որ բարեբար ազդեցություն են ունենում զգայական և մտածական ոլորտների վրա, ինչը բնականոն երևույթ է՝ նկատի առնելով մարդկային էության առանձնահատկությունները: Անմեղությունը անհասանելի է մարդու համար, դրանով իսկ այն չափազանց գրավիչ է, սակայն դրան տանող միակ ուղին անգործությունն է: Գերխնդիր դարձնել անարատության պահպանումը նշանակում է հրաժարվել որևէ գործողությունից, բայց և այնպես նման զգուշավորությունը ևս չի կարող առաքինություն երաշխավորել:

«Եվ շնորհակալ ենք Աստծուն, որ ապրել ենք այսքան երկար և այսչափ սափակ վնաս հասցրել», - ասաց պարոն Դեդալուսը:

«Շնորհակալ ենք Աստծուն, որ ապրել ենք այսքան երկար և այսչափ բարին կատարել», - ասաց ծերունին» (Joyce 2005:95):

Մյուս կողմից, սակայն, մեղք է որակվում անհնազանդության յուրաքանչյուր ակտ՝ ինչպես, օրինակ, Մթիվենի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող Լուցիֆերի դեպքում: Երբեմնի հրեշտակի կատարած մեղքի բնույթը անհայտ է: Աստվածաբանները դա համարում են հպարտությունը՝ այն ակնթարթային միտքը, որ կործանեց նրան ընդմիշտ: «Չեմ ծառայելու». ահա ըմբոստության այն վայրկենական դրսևորումը, որը դարձավ նրա հավիտենական արքայության պատճառը: Նշանակում է՝ մեծագույն մեղքը անհնազանդությունն է, ինչը հատուկ է բացառապես խորապես մտածելու և ընկալելու ունակ մարդուն, այսինքն՝ մեղքը ինտելեկտի ապստամբությունն է: Այսպիսով, Մթիվենի՝ ինքնավերլուծող և ինք-

նագիտակից անհատի կենտրոնական մեղքը անհանգիստ միտքն է՝ անհնազանդության շարժիչ ուժը: Ոչ ոք առավել մեղավոր չէ, քան մտածողը, ում չեն բավարարում ընդհանրական կանոնները և չեն խոչընդոտում սահմանափակումները:

**Արվեստագիտական արարչագործությունը՝
որպես մեղսականության փոխակերպում**

Մթիվեն Դեղալուսի ողջ կյանքը կենտրոնանում է մեղքի շուրջ, և միակ նպատակը դառնում է ապրելը ոչ թե որևէ բան անելու, այլ որևէ «սխալ» չանելու համար: Կատարել աստվածային կամքը և փրկել անմահ հոգին՝ ահա այն նպատակակետերը, հանուն որոնց արժե զրկվել մարդուն տրված միակ երկնային կյանքը յուրովի կառուցելուց: Դրա օգտին վերջնականապես խոսում է հայր Առնալի այն փաստարկը, որ անգամ ողջ աշխարհի նվաճումը ի գորու չի լինի փոխհատուցել հոգու փրկության կորուստը: Էկլեզիաստեսը արդարացիորեն նշել է, որ մեղքից խուսափելու լավագույն եղանակն է հիշելը վերջի՝ մահվան, դատի, դրախտի և դժոխքի մասին, քանի որ երկնային արքայությունը խոստանում է միևնույն արատը հազարապատիկ առավել շատ տալ և, ընդհակառակը, երկնային բարիքները պատկանում են նրան, ով առավելապես ասկետիկ երկնային կյանք է վարել և կրել առավելագույն զրկանքները: Նշանակում է՝ մարդուն առաքինի են դարձնում վախը պատժից և լավագույն ապագայի խոստումը: Մթիվենը շուտով հասկանում է, որ լայն առումով մեղանչել նշանակում է վայելել: Եթե կրքի պոռթկումները հաղթահարել և դրանք չիրագործել, ապա հնարավոր է խուսափել մեղսագործությունից, ինչը գրեթե անհնար է մարդկային էությունից ելնելով: Սակայն հնարավոր է կիրքը շեղել մեկ այլ ուղղությամբ՝ կործանարար հոսանքը վերածելով ստեղծարար ուժի և վերափոխել մտքերի ընթացքը: Այն, ինչը երիտասարդին թվում էր անհաղթահարելի՝ սեփական կրքերի սանձահարումը, դառնում է իրագործելի՝ Էմմայի մասին մանկության ջինջ ու մաքուր հիշողությունների շնորհիվ: Էմման այն խարիսխն է, ով վեր է հանում Մթիվենին բնագրային ոլորտից՝ «մոլեզին կրակը մարելով բանականության լույսով» (Collingwood 1970: 194): Աստված չափազանց մեծ և կարծր էր, իսկ Մարիամ Աստվածածինը՝ չափազանց ջինջ և սուրբ: Բայց նա պատկերացնում էր, որ կանգնած է Էմմայի կողքին և, հնազանդորեն ու արցունքոտ աչքերով, խոնարհվում և համբուրում է նրա արմունկը:

Թեև պարզ է, որ լիակատար անմեղսունակությունը գործնականորեն անհնար է, և երբևէ չսխալվելը Մթիվենին թվում է սիզիփոսյան աշխատանք, այնուամենայնիվ երիտասարդը հանկարծ բացահայտում է իր համար, որ «հեշտ է լինել լավը»: Այդ գիտակցումը հույս է ներշնչում, որ հնարավոր է ապաքինվել և կատարելագործվել անգամ այն դեպքում, երբ բազմիցս մեղանչել ես: Մարդկային կյանքի ամենահասարակ դրսևորումներում կարելի է գտնել մեղավոր հոգու ապաքինումը՝ գտնելով ինքնաբավ լինելու միակ ճշմարիտ ուղին՝ պարզապես մարդ լինել՝ թերություններով հանդերձ: Հայրական տան խառնաշփոթը և անկանոնությունը դառնում են Մթիվենի տանջահար հոգու հանգրվանը, և մանկությունը հիշեցնոց կաղամբի թթու գարշահոտությունը պարզ մարդկային երջանկություն է պարզևում, իսկ երջանկությունը կայանում է մտքի խաղաղության մեջ: Մայիտակ

փուռլինգը, հավկիթները, նրբերշիկն ու թեյը վերադարձնում են երիտասարդին դեպի իր պարզության մեջ գեղեցիկ կյանքը, մեկ այլ կյանք՝ արժանապատիվ և առաքինի: Երբեմնի մեղսական Մթիվենը իր էության բնագոյային բևեռից աստիճանական անցում է կատարում դեպի վեր՝ համտեսելով մեղքը և հագենալով դրանից: Մեփական ներաշխարհը ամենայն մանրամասնությամբ հետազոտելուց հետո նա իր ուշադրությունը ուղղում է դեպի արտաքին աշխարհը և սկսում դրա ուսումնասիրությունը: Հետզհետե պատկերը ամբողջանում է, և անգամ ամենահակասական իրերը և երևույթները համախմբվում են մեկ ընդհանուր ստեղծագործության մեջ: Միմյանց կցելով առանձին կետերը՝ Մթիվենը տեսնում է ողջ աշխարհը որպես աստվածային ուժի ու սիրո լայնարձակ, բայց համաչափ արտահայտություն: «Նա լաց եղավ կորցրած անմեղության համար» (Joyce 2005:169):

Անդադրում փնտրտուքներից հետո Մթիվենին վերջապես հաջողվում է գտնել իր ազատության ուղին՝ արվեստագիտական արարչագործությունը: Երևույթները ընկալելով արվեստագետի աչքերով՝ երիտասարդը դրանք սկսում է գնահատել ոչ թե մեղքի և անմեղության, այլ լոկ գեղեցկության չափանիշով: Կինը այժմ դադարում է մարմնական տարփանքի առարկա լինելուց և զբաղեցնում է իրական դերը՝ որպես գեղեցիկի մարմնավորում և ստեղծագործության ոգեշնչում: Կնոջ մարմինը, որը մինչ այդ մեղքի համար պարարտ հող էր հանդիսանում և վախ ներշնչում, ձեռք է բերում նոր նշանակություն: Մթիվենը դիտում է կնոջը այնպես, ինչպես ուսումնասիրում են բնության որևէ երևույթ՝ այն ամենայն մանրամասնությամբ վերարտադրելու նպատակով: Արվեստի հրաշագործ ազդեցությամբ հասարակ աղջնակը վերածվում է գեղեցկագույն ճայի, ում կարելի է նայել առանց ամոթի կամ ցանկասիրության: Նա մահկանացու գեղեցկության մարմնացումն է, ում պատկերը ընդմիշտ դրոշմվում է երիտասարդ արվեստագետի հոգում ու վեհացնում այն: Արվեստը չպետք է առաջացնի ցանկասիրություն կամ այլ մարմնական մղում դիտողի հոգում: Ըստ Թոմաս Աքվինացու՝ ճշմարիտ արվեստի արտահայտած գեղեցկությունը չի կարող առաջացնել զուտ ֆիզիկական զգացողություն. այն ծնունդ է տալիս գեղարվեստական ստասիսի՝ կատարյալ կարեկցանքի կամ հիացմունքի, ուստի Մթիվենի՝ որպես նորեկ արվեստագետի առջև ծառանում է գեղեցիկը արտահայտելու մեծագույն խնդիրը:

«Ապրել, սխալվել, ընկնել, հաղթանակել, վերստեղծել կյանքը կյանքից: Նրան հայտնվել էր վայրի հրեշտակ՝ մահկանացու երիտասարդության ու գեղեցկության հրեշտակը» (Joyce 2005:271):

Եզրակացություն

Մարդկային հոգին ունի դանդաղ և մթին ծնունդ՝ «առավել առեղծվածային, քան մարմնի ծնունդը» (Joyce 2005:229): Պարզ է դառնում, որ անհատի ձևավորումը չափազանց խրթին գործընթաց է, ուստի, ըստ էության, մարդու համար անհամեմատ հեշտ է ապրելը այն դեպքում, երբ կա հավատ վերամարդկային ուժի հանդեպ, մինչդեռ անկախությունը ուղեկցվում է պատասխանատվությունը կրելու մենաշնորհով: Դեմ առ դեմ մնալով սեփական որոշման և դրա հետևանքների հետ՝ անհատը ինքն է իմաստավորում ու արժևորում իր արարքները, և միանշանակ ճշմարտությունները կորցնում են արդիականությունը: Ազատ կամքի պայ-

մաններում անխուսափելի են սեփական անկատարության բացահայտումները՝ միաժամանակ կաշկանդող և վերհանող:

Մեղքից հնարավոր է լինում խուսափել, երբ մոռանում ես դրա գոյության մասին, ազատվում սխալվելու ամենակուլ վախից և ողջ ներուժը կենտրոնացնում ստեղծարար ուժի վրա: Նորի ստեղծագործությունը կոծկում է բոլոր կործանարար մտատանջությունները և իրականացնում այն, ինչը անհնար էր այլ ճանապարհով: Ուղղելով իր հայացքը արվեստին՝ Մթիվենը լիովին այլ կերպ է սկսում դիտել կյանքը և սեփական անձ: Որոշակիորեն նախանշված «ճշմարիտ» ուղով ընթանալը և դրանից դուրս-ինչ շեղվելու սարսափը հանգեցնում է կյանքի պասիվ հայեցման, մինչդեռ ստեղծարարության համար օղի պես անհրաժեշտ է դուրս գալ հստակ գծագրված շրջանից և հաջորդական սխալներ գործել հանուն վերջնանպատակի՝ հանրային բարօրության, արվեստի կերտման կամ պարզապես անձնական երջանկության:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ իրերի դրվածքի անտարբեր դիտարկումը և լուռ հպատակությունը օբյեկտիվ իրականությանը ապահովում է կայուն, առանց պարտավորության և իրավունքի, բայց ոչ մի դեպքում արժանապատիվ գոյություն, երբ ընտրությունը և որոշումը պատկանում են հենց մարդուն: Չայնի իրավունքը հեշտ չի տրվում, սակայն այն ունենալու բերկրանքը փոխհատուցում է ցանկացած խոչընդոտի հաղթահարում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Aquinas, T. (1999) *Selected Writings*. New York: Penguin Classics.
2. Brandt, R. B. (1979) *A Theory of the Good and the Right*. Oxford: Clarendon Press.
3. Collingwood, F. (1970) *A Portrait of the Artist as a Young Man*. London: Coles PC.
4. Franke, W. (2008) *Joyce and the Bible*. New Haven: Yale University Press.
5. Joyce, J. (2005) *A Portrait of the Artist as a Young Man*. London: MacMillan CL.

The Dichotomy of Guilt and Innocence in J. Joyce's novel "A Portrait of the Artist as a Young Man"

The concept of guilt is implanted into the mind and soul at the earliest stage of human life, when the perceptions of the surrounding world are not formed yet, and the distinction between the good and the evil is unknown to the human consciousness. The novel "A Portrait of the Artist as a Young Man" by James Joyce presents the self-map of a person, seeking for his place and role. The protagonist, Steven Dedalus, encounters the truth of his own sinfulness, which becomes both an obstacle and a stimulus for progress. Perceiving the environment through an artist's eyes, Steven begins to evaluate them based on mere beauty, regardless of the criteria of guilt and innocence.

Дихотомия грешности и невинности в романе Дж. Джойса «Портрет молодого артиста»

Концепция вины внедряется в мысль и душу на самом раннем этапе человеческой жизни, когда восприятие мира еще не сформировано, и различие между хорошим и плохим неизвестно человеческому разуму. Роман Джойса «Портрет молодого артиста» представляет карту самопознания человека, ищущего свое место и роль. Протагонист, Стивен Дедалус, сталкивается с бесприкословной правдой собственной грешности, которая становится препятствием и стимулом для развития. Воспринимая явления сквозь призму артиста, Стивен начинает оценивать их на основе красоты, независимо от критериев греха и невинности.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԶՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru